# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.10.2018թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ**

**թիվ ՍՑ-ԷՍ-2018/140**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.10.2018թ. թիվ 01.1/26-3/17673-18 գրությամբ «ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 24.09.2018թ. թիվ 5.06.2/51843-18 գրության հիման վրա, 01.10.2018թ. «ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

**2. <u>ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ բնապահպանության նախարարությունը 24.09.2018թ. թիվ 5.06.2/51843-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ բնապահպանության նախարարության և «ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի մայիսի 4-ին կնքված N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/19-4» և N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/20-4» ծածկագրերով գնման պայմանագրերի (այսուհետ՝ Պայմանագրեր) շրջանակներում «ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ն խախտել է ստանձնած պարտավորությունները և հիմք ընդունելով Պայմանագրերի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ բնապահպանության նախարարությունը 2018թ. սեպտեմբերի 12-ից միակողմանի մասնակի լուծել է Պայմանագրերը չմատակարարված ապրանքների մասով:

«ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ն 2018 թվականի սեպտեմբերի 20-ին վճարել է հաշվարկված տույժերը և տուգանքները:»:

ՀՀ բնապահպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն Պատվիրատուի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

**3. <u>«ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 01.10.2018թ. գրությամբ դիմել է «ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.10.2018թ. թիվ 01.1/26-3/17673-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ կարծիք չի ներկայացվել:

«ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն Ընկերության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

**4. ՍՑ-ԷՍ-2018/140 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 01.10.2018թ. թիվ 01.1/26-3/17673-18 գրությունը, ՀՀ բնապահպանության նախարարության 24.09.2018թ. թիվ 5.06.2/51843-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/19 և ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/20 ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգի հրավերները (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ բնապահպանության նախարարության և «ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի մայիսի 4-ին կնքված N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/19-4» և N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/20-4» ծածկագրերով գնման պայմանագրերը, Պատվիրատուի կողմից 12.09.2018թ. «ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ին ուղղված թիվ 5/06.2/51799 և 5/06.2/51800 գրությունները,

ՀՀ բնապահպանության նախարարության և «ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ի միջև 04.05.2018թ. կնքվել են N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/19-4» և N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/20-4» ծածկագրերով գնման պայմանագրեր (այսուհետ՝ նաև Պայմանագրեր):

Պայմանագրերի՝

- 1.1 կետերի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է Պայնագրով սահմանված կարգով, ծավալներով ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի Հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:
- 2.1.7 կետերի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:
- 2.1.7.1 կետերի բ) ենթակետերի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 (երեք) աշխատանքային օրից ավելի:

- 8.1 կետերի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
- 8.9 կետերի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, նույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

- N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/19-4» ծածկագրով գնման պայամանգրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր – գնման – ժամանակացույցի համաձայն՝ «ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ն պարտավորվել է մինչև 30.06.2018թ. մատակարարել՝ 4 հատ ավտոմեքենայի անիվ, 50լ. փոխանցման տուփի յուղ և 400լ. շարժիչի յուղ:

- N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/20-4» ծածկագրով գնման պայամանգրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր – գնման – ժամանակացույցի համաձայն՝ «ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ն պարտավորվել է մինչև 30.06.2018թ. մատակարարել՝ 4 հատ ավտոմեքենայի անիվ, 6 հատ 60Ա vega կուտակիչ մարտկոց, 3 հատ 75Ա vega կուտակիչ մարտկոց, 100լ. փոխանցման տուփի յուղ և 500լ. շարժիչի յուղ:

ՀՀ բնապահպանության նախարարությունը 12.09.2018թ. «ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ին ուղղված թիվ 5/06.2/51799 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ բնապահպանության նախարարության և «ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի մայիսի 4-ին կնքված N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/19-4» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ նաև Պայմանագրեր) շրջանակներում Ձեր ընկերությունը ստանձնել է 665.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով տրանսպորտային նյութերի մատակարարման պարտավորություն, ինչի համար կատարման վերջնաժամկետը սահմանված էր մինչև 30.06.2018թ.: Մինչև 12.09.2018թ. չմատակարարված ապրանքների ընդհանուր գումարը կազմում է 435.700 ՀՀ դրամ, իսկ ապրանքների մատակարարման ժամկետը խախտվել է 73 օր:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ բնապահպանության նախարարությունը 12.09.2018թ. միակողմանի լուծում է Պայմանագիրը չմատակարարված ապրանքների մասով:

Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով, համաձայն պայմանագրի 6.2 կետի, հաշվարկված տույժը կազմում է 15.903 ՀՀ դրամ:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «դ» կետով, ինչպես նաև հաշվի առնելով Ձեր ընկերության կողմից 04.05.2018թ. միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնագրով ստանձնած պարտավորությունը՝ պայմանագրի ապահովման Պայմանագրի միայն չկատարված մասով կազմում է 43.570 ՀՀ դրամ:

Հաշվարկված ընդհանուր տույժերը, ինչը կազմում է 59.473 ՀՀ դրամ, սույն ծանուցումն ստանալուց հետո 5 բանկային օրվա ընթացքում փոխանցել ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչության 900011018646 հաշվեհամարին և բնապահպանության նախարարություն ներկայացնել վճարման անդորրագիրը:»:

ՀՀ բնապահպանության նախարարությունը 12.09.2018թ. «ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ին ուղղված թիվ 5/06.2/51800 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ բնապահպանության նախարարության և «ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի մայիսի 4-ին կնքված N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/20-4» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ նաև Պայմանագրեր) շրջանակներում Ձեր ընկերությունը ստանձնել է 1.017.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով տրանսպորտային նյութերի մատակարարման պարտավորություն, ինչի համար կատարման վերջնաժամկետը սահմանված էր մինչև 30.06.2018թ.: Մինչև 12.09.2018թ. չմատակարարված ապրանքների ընդհանուր գումարը կազմում է 711.000 ՀՀ դրամ, իսկ ապրանքների մատակարարման ժամկետը խախտվել է 73 օր:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ բնապահպանության նախարարությունը 12.09.2018թ. միակողմանի լուծում է Պայմանագիրը չմատակարարված ապրանքների մասով:

Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով, համաձայն պայմանագրի 6.2 կետի, հաշվարկված տույժը կազմում է 25.951 ՀՀ դրամ:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «դ» կետով, ինչպես նաև հաշվի առնելով Ձեր ընկերության կողմից 04.05.2018թ. միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնագրով ստանձնած պարտավորությունը՝ պայմանագրի ապահովման Պայմանագրի միայն չկատարված մասով կազմում է 71.100 ՀՀ դրամ:

Հաշվարկված ընդհանուր տույժերը, ինչը կազմում է 97.051 ՀՀ դրամ, սույն ծանուցումն ստանալուց հետո 5 բանկային օրվա ընթացքում փոխանցել ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչության 900011018646 հաշվեհամարին և բնապահպանության նախարարություն ներկայացնել վճարման անդորրագիրը:»:

Միաժամանակ ՀՀ բնապահպանության նախարարությունը N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/19-4» ծածկագրով գնման պայմանագիրը լուծելու մասին հայտարարությունը 12.09.2018թ. հրապարակել է www.procurement.am կայքում, իսկ N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/20-4 ծածկագրով գնման պայմանագիրը լուծելու մասին հայտարարությունը՝ 17.09.2018թ.:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝ 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների

ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

• N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/19-4» պայամանգրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցի համաձայն՝ «ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ն պարտավորվել է մինչև 30.06.2018թ. մատակարարել՝ 4 հատ ավտոմեքենայի անիվ, 50լ. փոխանցման տուփի յուղ և 400լ. շարժիչի յուղ:

• N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/20-4» պայամանգրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցի համաձայն՝ «ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ն պարտավորվել է մինչև 30.06.2018թ. մատակարարել՝ 4 հատ ավտոմեքենայի անիվ, 6 հատ 60Ա vega կուտակիչ մարտկոց, 3 հատ 75Ա vega կուտակիչ մարտկոց, 100լ. փոխանցման տուփի յուղ և 500լ. շարժիչի յուղ:

• N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/19-4» և N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/20-4» ծածկագրերով գնման պայմանագրերով նախատեսված ապրանքները «ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրերով նախատեսված քանակով և ժամկետներում չեն մատակարարվել:

- «ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ն 12.09.2018թ. պատշաճ ծանուցվել է 04.05.2018թ. կնքված N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/19-4» և N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/20-4» գնման պայմանագրերը միակողմանի լուծելու վերաբերյալ, ինչպես նաև պայմանագրերը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը 12.09.2018թ. և 17.09.2018թ. հրապարակվել է www.procurement.am կայքում:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ն, «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/19-4» և N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/20-4» ծածկագրերով գնման պայմանագրերով նախատեսված ապրանքները սահմանված քանակով և ժամկետում չմատակարարելով՝ խախտել է 04.05.2018թ. կնքված գնման պայմանագրերի 1.1 կետերով ստանձնած պարտավորությունն, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրերի միակողմանի լուծմանը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.10.2018թ. թիվ 01.1/26-3/17673-18 գրությամբ «ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

**ՀՀ գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ